մուլներ, վիմագրական մամուլներ. նաև ջրաչարժական մը, գը-
լանաձև մամուլ, կտրիչ գործիքներ, կազմարարութեան և ձու-
լարանի գործիքներ, և հայերէն տառերու և հայկական խազերու
29 տեսակ մայրեր, զանազան մեծութեամբ տառեր, ոչ միայն
հայերէն, այլ և եւրոպական աթուոթայով զարդագիրեր, շրջա-
նակի և անկիւնի զարդեր: Ըստ այսմ Ս. Յակոբեանց Տպարանը
սովորական տպարան մը ըլլալէ աւելի, ձուլարանով և կազմա-
տունով ու վաճառանոցով լրացած՝ հրատարակչական հաստա-
տութիւն մը կը դառնայ:

Ծիսական գիրքերու ճիւղը կրնայ այդ Տպարանին իբր յատ-
կանշական նկատուիլ. ոչ միայն զի հեղինակաւոր հրատարակու-
թեան կնիքը կը կրէ, այլ և այնպիսի ճիւղ մ'է որ սովորական
հրատարակիչներու առևտրական ուղղութեան չհամապատասխա-
ներ: Տպագրուած են գրեթէ բոլոր ծիսական գիրքերը, և ա-
նոնցմէ շատեր քանիցս տպագրուած են: Բացի ծիսական գիր-
քերէն, որ վանքին կողմէն կը հրատարակուին զոհողութեամբ,
հրատարակուած են նաև մեծահատոր կարևոր գիրքեր, դասա-
գիրքեր և վէպեր, ՍԻՈՆ ամսագիրը և նախնեաց գործերէն ո-
մանք: Ս. Յակոբեանց Տպարանը հարիւր տարուայ ընթացքին
հրատարակած է չորս հարիւրէ աւելի գիրքեր երկու հարիւր տե-
սակներով: Աւելի մանրամասնութեանց համար դիմել Դեր. Տ.
Մեսրոպ վրդ. Նշանեանի (այժմ եպս.) 1914ի Երուսաղէմայ
Օրացոյցին մէջ իբր յաւելուած հրատարակած «Ակնարկ մը Երու-
սաղէմի սրբոց Յակոբեանց Տպարանին վրայ» խորագրով, հայ-
կական տպագրութեան 400ամեակին առթիւ գրած յօդուածին:

Գ. Նորաշէն Մատենադարան.— Ս. Յակոբի վանքին հնօր-
եայ տպագրութեան աւելորդ օրինակները քանի մը տասնեակ-
ներով կը պահուին տանիքին վրայ Մայր տաճարին Ս. Համբարձ-
ման սեղանին մօտ կոկիկ և փոքրիկ շէնքի մը մէջ, որուն դրան
վրայ դրուած արձանագրութենէն կը տեսնուի որ 1727ին Շըղ-
թայակիրը շինած է զայն Յովհաննէս Կոլոտ պատրիարքի ընա-
կութեան համար. որ սակայն չէ կրցած գալ իր մահուան պատ-
ճառաւ: Այս մատենադարանը կրնանք իբր պահեստի շտեմա-
րան նկատել: Տպագիրներ ու միւս մատենադարանը զետեղուած
է Ս. Թէոդորոսի մօտերը, Տէրիրմէն և Տէմիր Թաղերու մէջտեղը,